

ՄԱՍԻՍ

ՀԱՆԳԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԵԿՈՒԻ ՍՄԵՆ ՇԱՐՄԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ

Պոլիս եւ Գաւառներ

40 Դրուշ

Ռուսաստան

4 Բուպի

Եւրոպա

10 Ֆրանք

ՀԱՍՑԷ

Ղալաթիա, Իզմիրի Օղլու խան, րիս 3-4

ՏԱՐԻ ՄԸ

Դեկտեմբեր 31ի յաւելւածական
թիւով Մաիի 1892ի տարեշրջանը բո-
լորեցաւ :

Տարեգլուխ մը, անշուշտ, տարբե-
րութիւն չունի ուրիշ որ և է օրէ,
բայց հանգրուան մըն է ուր անօգուտ
չէ կանգ առնել կտրուած ճամբան չա-
փելու համար ճամբուն ֆնայածին հետ.
և, առանց սրտաթափ ըլլալու պարտա-
կանութեան մեծութենէն, աշխատելու
ջանք ընել հետեւելիք շաղին համար՝
ուղիղ գծին, երեւակայական գծին մօ-
տենալու շարունակ :

Մաի-ը հրատարակողները կը կար-
ծեն որ այդ ջանքը ըրած են միշտ
խղճամօրէն ու համեստօրէն . բոլոր-
ւող տարեշրջանը այս միութարութիւ-
նը ու այս վարձատրութիւնը միայն կը
թողու իրենց :

Քանի որ տարեկան հաշուեյարդա-

րութիւն մըն է որ կ'ընենք ահա, Մա-
իի գրական արժանիքը կը կարծենք
որ յաջողեցանք միշտ բարձր պահե-
լու . դժուարահաճ ու խստապահանջ
եղանք ամենուն և մեր իսկ անձին
գէժ . Զանացինք, ու կը կարծենք թէ
յաջողեցանք, որ գրական ամեն սե-
ռերու մէջ գորտ Մաի- շօշափեց, լաւա-
գոյնները տանք մեր ընթերցողներուն :

Նոյնպէս, գեղեցիկ գաղափարին
գուղընթաց պահպանեցինք օգտակա-
րի, պիտանիի գաղափարը՝ միշտ գրա-
կան տեսակէտով, որ ապաքէն Մա-
իին միակ տեսակէտն էր :

Քաջալերութիւնները չպակսեցան
ամեն անոնց կողմէ որոնց կարծիքը ու
վճիռը կարեւոր էր մեզի, ու այսպէս
սրտապնդած, ի գլուխ հանեցինք փոք-
րիկ գործ մը, որ սակայն կարգ մը
պզտիկ գործերու պէս, մեծ աշխատու-
թիւն կը պահանջէր :

Հանրային խնդիրներու մէջ երբեք
անոտի վէճերով չզբաղեցանք. սկիզ-

բէն մինչեւ վերջը մեր մատնանիշ ըրած նիւթերը միշտ ուշի ուշով քննելէ վերջը կարծիք յայտնեցինք, երբեմն խտուրթեամբ, երբեք կիրքի տպաւորութեան տակ, ամեն առթիւ պնդելով զարգանալու պէտքին վրայ, կըրթական ու գրական հնոտի համոզումները, եղանակները մէկդի ընելու հարկը ջատագովելով:

Մաքս օրաթերթ մը չէր, ու ըլլար իսկ, իր սկզբունքները և նոյն իսկ արժանապատուութեան զգացումը թոյլ չէին կրնար տալ իրեն վէճի ու պայքարի բռնուելու աջին ու ձախին հետ:

Մեր համոզումն այն է որ ամեն գաղափար պէտք է արտայայտուի ու մտիկ ըլլուի իր ապացոյցներուն ու բացատրութիւններուն հետ, առանց քէնի, առանց նախապաշարումի:

Այս ըսել չէ թէ համամիտ ըլլանք անոնց հետ որոնք՝ ներքի կը համարին առտուն կանուխ ելլողին՝ առանց որ և է հեղինակութեան, առանց անհրաժեշտ համութեան մը գոնէ նուազագոյն քանակին, ազգային կամ գրական ամեն նիւթի վրայ վճիռ տալ:

Բայց ընդհանրանալու վրայ եղող այս ախտին դարմանը ինքնաճանաչութեան ու համեստութեան գաղափարին տարածումովը միայն կ'ըլլայ:

* * *

Այսուհետեւ, Մաքս չաքաթաթերթի վերածուելով, աւելի ընդարձակ սահման մը ունի աշխատելու համար. այն բոլոր ոյժերը որոնցմով Մաքսը ձեւացաւ անցեալ տարի, պիտի մնան ասպարէզին վրայ, շարունակելով Մաքսը հրատարակել և հատուցանել հանրութեան այն պարտքի բաժինը, որ երիտասարդութեան կ'իյնայ:

Անոնք որ հանրութեան դէմ որ և է պարտաւորութիւն չունենալու գաղափարը ունին, անոնք ողորմելի եսամոլներ են, աննշան ու անօգուտ մար-

դիկ ով որ ըլլան, ուր որ ալ գլտնուին. անհատական հաշիւներէն գուրս աշխարհի մը գոյութիւնը չճանչցողներուն բաժինը՝ այդ աշխարհին առջեւ անծանօթ մնալին է:

Հոս, հոն, պիտի պիտի պատահիք մարդոց, ծանօթներու որ թեւերնուդ քաշեն, կամաց մը ականջնուդ ի վար փսիսան, իրենց փորձառու մարդու խորհուրդները տալով,

— Անձնական դործերուդ յատկացուր եթէ ժամանակ ունիս աւելորդ. ի՞նչ հարկ, գրական գործի մը կապուիլ, որ փոր չկշտացներ:

Կը մաղթենք որ այս յաւետենական անկուշտները չթունաւորեն, չպականեն մեր աղոց հոգիները:

* * *

Այլ ամէն ոք գայ թող իր աշխատութեան բաժինը բերելու իր տարիքին, իր կարողութեան համեմատ ծառայելով երկրին և հասարակութեան. անհատները կ'անցնին և կ'անցնի իրենց հետ կեանքերնուն յիշատակը. բայց ինչ որ ապահովապէս կը մնայ անկորուստ, հանրութեան վաստակաւորի մը անունն է, միակ ինչք՝ որ արժէք ունի, միակ հարստութիւն՝ որ չփճանար և զոր հանրային երախտագիտութիւնը կը պահպանէ յաւիտեան:

Այս պարզ դիտողութիւնները ըրինք պատասխանելու համար անոնց, որոնք կը կարծեն թէ անխելքի գործ մը կ'ընենք մենք, փաստաբան, վաճառական կամ արհեստաւոր, մաս մը յատկացնելով մեր ժամանակէն գրական գործի մը, երբ այդ մասն ալ մեր արհեստին մէջ կարելի էր դրամով փոխարինել:

Շահադիտութիւնը պէտք է վերջապէս կանգ առնէ տեղ մը:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

Զ Ա Ր Թ Օ Ն Ք

(ՆՈՐԱՎԷՊ)

Մենք ինքի խթման գիշերը՝ այն մեծապանծ գիշերներէն մին է ուր Բարիդ ինքզինքը կը մոռնայ : Ինքզինքը մոռնալու ըզձանքն, որ առաջ, հաւատքի զարերու երկար յաջորդութեան մը մէջ, բարեպաշտներուն զուխները կը խոնարհեցնէր այդ գիշերը գոթական կաթողիկէներուն մօտը կամարներուն տակ և անոնց աչքերը կը վառէր գերերկրային հրաշափառ տեսիլներու շրջումովը, հիմա անոնց թռներուն մէջ փոխուած է նոյնչափ զօրաւոր հրայրքի մը, — վայելքն իր ամենէն նիւթական ու ամենէն հեշտական ձեւերուն տակ, անձնատուութիւն այն ամէն հաճոյքներուն որք ուղեղը կը գրգռեն ու ջիւղերը կը ցնցեն, բանականութեան հրաժարում մը :

Սկզբնական նոյն զգացումն է որ տարբեր ձեւի տակ կը վարէ մարդկութիւնը : Պէտք է որ մարդս երբեմն երբեմն աւելի ստատիկ զգայ, աւելի ուժով վայելէ :

Միեւնոյն ցօրունը՝ տարբեր ծագով մը :

Կ'ըսէ բանաստեղծը :

Սրաի նոյն պէտքը՝ տարբեր գոհացումով :

«Զարթօնք» (Réveillon) կ'անուանէ այդ գիշերը Ֆրանսացին : Ու իրաւ զարթնումն է այս իր բնաւորութեան ամենէն շէնչող, ամենէն խայտախորդ, ամենէն զուարթ ու բարեմիտ յատկութեանց : Գըլ-խիկոր կը նետուի հաճոյքին մէջ : Անհաշիւ, անխնայ վատնում մըն է այս, առանց հաշիւ բռնելու, առատաձեռն հարուստի մը պէս որ մսիեղուն հաճոյքովը կը շատանայ : Մէկ խորհուրդ մը ունի միայն. կարելի եղածին չափ շատ գուարճանալ, ու այն մտածումը թէ մի և նոյն վայրկեանին բնաւորներ են որ իրեն պէս կը խորհին ու կը գործեն, կը թեթեւցնէ իր սիրտը,

երանութեամբ կը լեցնէ զայն : Օգը ելեկտրականութեամբ մը գերյագեցած է կարծես, բոլոր աչքերուն մէջ վառող կրակին առքութեամբը և բոլոր սրտերուն աշխոյժ տրոփման աւելնովը :

* * *

Սենեակէս ուշ տանն, շատ ուշ, դուրս կ'ելլեմ այն գիշերը պառոյտ մը ընելու քողքին մէջ :

Անձրիւր կուգայ ցորեկունէ ի վեր, անվերջ անդադրում, ու հիմա, քողքին ընդհանուր լուսավառութեան մէջ, մայրերուն տալով ցողացիկ ապակիի վէտով, սուսներ և իր լուսանիւթ հեղուկի հոսումովը, զուարթ ոգիւ տրոփին մը կը սփռէ :

Ամէն սր դուրսն է :

Ամենքն ալ կ'երթան միեւնոյն բնազդէն վարուած, համախումբ ուրախութեան այն խորին զգացումովը որ անձանօթները իրար կը մօտեցնէ և անոնց միջեւ կը հաստատէ թաքուն մտերմութեան կապ մը : Բաղմութիւն կայ սրտվարներուն վրայ, փողոցներուն մէջ, թատրոններուն մէջ, սրճարաններուն մէջ, հոն ուր աչքը, տականջը, կոկորդը և որովայնը վայելք մը կ'ընան գտնել :

Մեծ սրճարաններուն և գիշերուան ճաշարաններուն առջեւ կառքերը կուգան իրարու ետեւէ կանգ առնել : Շքեղ հագուած կիներ, որոց մարմինն ամբողջ լոյս մըն է և տեսքը՝ վայելք մը, վար կը ցատքեն թեթեւօտն, ժպտուն, ծիծաղկոտ դէմքով ու կրակոտ աչքերով, երթալու դէպի մասնաւոր խուցերն ուր զուարթ խումբեր մեկվէյեռներ պիտի կատարեն :

Գարեջրատունները լեփ լեցուն են : Ամէն սր կ'երթայ նոյն գիշերուան առանգական «սուր օ ֆուռմաճ»ը կամ «սուր ա լ'օնիօն»ը խմելու : Իսկ ուտելիքի խանութներուն առջեւ բաղմութիւնը լեցուած է. ամենէն ճարտար խոհարարներն իրենց տաղանդը թափած են խնամելու իրենց պատրաստութիւնները, և՛ ցուցափեղկին ետին՝ տապկած հաւերու, խորտիկներու ու համադամներու արուեստական շարքը :

անցորդներուն նայուածքը կը գնրէ:

Կ'երգեն, կը խնդան, բարձրաձայն կը խօսին, քալելով խմորեղէններ ու կարկանդակներ կ'ուտեն. շատեր՝ իրենց թեւին տակ խոշոր խոստմնալից ծրարներով՝ կը վազեն դէպի հոն ուր զուարթ ընկերներ ու ընկերուհիներ իրենց կը սպասեն անշուշտ:

Բուն Ռէվէյեոնը՝ կէս գիշերէն ետքը զուարթ «սուբէ» մը ընելն է. բայց մինչև այն վայրկեանը ու անկէ՝ ետքը...

Բազմութեան հետ կ'երթամ, անհոգ, աննպատակ: Չորս կողմի խժողութիւնը կը գինովցնէ զիս՝ ապէնթի տխուր գինովութեամբ մը: Օ՛հ, բազմութեան մէջ մինակ ըլլալը, մենութեանց ամենէն զարհուրելին, ամենէն աղգականը: Բոլոր թաքուն թեւերն որք կը խաղցնեն այդ մարդիկը, չկան ինծի համար. թատերաբեմին վրայ ի՞նչ տարօրինակ սպաւորութիւն մը պիտի ընէր խամաճիկն որուն թելը կոտրած է և անշարժ կը մնայ, մինչ իր քովիները կը ցատաւեն ու կը կոտորտուին:

Կազմակերպութիւն մը կը նետուիմ ու կը յառաջանամ: Շանդելիդէի մօտ կը գտնեմ ինքզինքս: Կառքերը, չքեղ, մուշտակազգեստ կառապանին քով վայելչօրէն հազուած սպասեակներով, սրարչաւ կ'երթան դէպի գեղեցիկ թաղերը, ապարանքներու խրոխտ դռներուն մէջ անհետանալու: Գոց փեղկերուն ետին, ճաշկն ու դրամն ի՞նչ մոգական հրաշագործութիւններ կատարած են: Վախը հիմա, որուն մարմնող արձագանգները կը հասնին պատուհանէն, ի՞նչ հեւքեր կուտայ պարուհիներուն՝ կուրծքին գրգանոյշ իգականութեանը, ու ի՞նչ հիացական անշարժութիւններ՝ անոնց ժպիտներուն:

* * *

Շատ քալած ըլլալու եմ, որովհետեւ կը զգամ որ ծունդերս ա՛լ կը դժուարանան զիս տանելու: Յամրաքայլ ետ կը դառնամ դէպի Գառգիէ-Վաղէն, էջովէի սրճարանը կը մտնեմ, ու անկիւն մը կը քաշուիմ:

Կիներու ու երիտասարդներու խելիօլ բազմութիւն մը լեցուցած է այդ սրճա-

րանը, որ ֆլաման հին ճաշակով շինուած է, կտոր կտոր գունաւոր ապակիներով որոց մէկուն վրայ միջին դարու ասպետ մը ներկայացուած է զրահաւոր, և միւսին վրայ դղեկուհի մը: Զղեղունը ծխոտ գերաններու վրայ յեցած է. կաղնեփայտէ ամրապինդ սեղաններ կ'ամբողջացնեն սրճարանին հին կարգուսարքը, որ կը յիշեցնէ հոլանտացի վարպետներու նկարները:

Անընդհատ կը մտնեն ու կ'ելլեն: Ահա ռելի ժխոր մը կայ կոկորդալիւր պուշը-տուքներու, բարձրաձայն քահքահներու, աղմկալի խօսակցութեանց: Կիները սեղանէ սեղան կը պտըտին, հոս գարեջուր մը խմելով, հոն «պէնէտիքին» մը, անդին «պալատուազ» մը: Մուխը պատած է չորս կողմ, և երչիկի, սոխի, կաղամբի բարկ հոտերը օդին մէջ ծաւալած են:

Սպասաւորը խոշոր բաժակ մը գարեջուր դրած է առջիս: Ոսկեգոյն հեղուկին վրայ՝ ճերմակ փրփուրին աստիճանական քայքայումը կը դիտեմ, գզուած նուրբ թիֆթիքի թեւերու պէս զօրս հովը կ'առնէ կը տանի կամաց կամաց:

Կէս ժամը անգամ մը բազմութիւնը կը փոխուի. հիները կ'երթան ուրիշ գարեջրատուններու մէջ պարպելու իրենց բաժակները, ու նոր կիներ ու նոր երիտասարդներ կուգան անոնց տեղը բռնելու: Վերջ ու վախճան չունեցող իրարանցում մը ու վայնասուն մըն է այս:

Ի՞նչ ունին այդ մարդիկը, իրաւ ուրախ են ամենքն ալ: Չէ՛ հարկաւ: Բայց, ա՛հ, իրարմէ կ'առնեն իրենց ոգեւորութիւնը. տեսակ մը սուրբ-գութտոնեան մոլեկան պար է այս որ զիրենք ընդքարչ կ'առնէ կը տանի, ալեծածան դանդաճաւանդով մը. իւրաքանչիւրը հոն կը դնէ մաս մը իր զեղումէն, իր ըզձանքէն, իր կողանքէն, ու ամբողջութիւնը մուրցք մըն է հիմա որ մէջը եղողները կը բորբոքէ ու դուրսը մնացողին համար անհասկնալի բան մը կը դառնայ: Հեռուէն դիտողի մը համար, որ նուազարանին ձայնը չլսեր, ի՞նչքան անիմաստ բան մը պիտի թուէր պարողներու դարձգարձիկ վազքն ու համաչափ ծեփծեփումները: Երաժշտու-

թեան ձայնն որ այդ մարդերուն ականջին մէջ կը հնչէ ու կը խանդավառէ դանոնք, չհասնիր մինչեւ օտարականին ականջը: Այդ երաժշտութիւնը, որ վաղընջական հին նուագի մը անուշութիւնն ունի, անոնց մտքին մէջ կ'արթնցնէ դաւաւոր անցեալ մը, հնաւուրց ժառանգականութիւն մը, վերլիլումներ միատեղ կրուած ցաւերու, քովէ քով վայելուած ուրախութեանց,—ամբողջ աշխարհ մը յիշատակներու որք իրենց համար միայն այն ան զօրաւոր են:

* * *

Կէս գիշերը շատոնց անցած է երբ, երկարատեւ թմրութենէ մը արթնցածի պէս, սրճարանէն դուրս կ'ելլեմ:

Անձրեւը կը շարունակէ միշտ իր կայլակներու լուսեղէն պարը մայթին վրայ, կազին յորդ պայծառութեանը մէջ ցատքաւոր բեկբեկումներով: Բանթէոնի մեծ հրապարակին վրայ մթութիւնը իջած է, ահաւոր ու սարսաղեցիկ բան մը առնելով չըջակայ խոշոր շէնքերէն, իրաւագիտական վարժարանը, Սէնդ-Ժընըվիէֆի մատենադարանը, Սէնդ-Ժընըվիէֆի եկեղեցին, Հանրի Դի լիսէն իր բարձր աշտարակով, ու Բանթէոնը մանաւանդ, յիշակերտ-գերեզման, որ ցուրտ վեհութիւնն ունի թափուր վիթխարի շէնքերուն:

Դիմացի փողոցին մէջ կը մտնեմ, պատին տակէն երթալով կամաց կամաց, օձիքս դարձուցած, գլուխս կախ, անուշադիր անձրեւին որ կը տեղայ, միշտ կը տեղայ: Կազի լամպարի մը լոյսը ետեւէս կը զարնէ, ու ստուերս կ'երկնայ, կ'երկընայ, թաց մայթին վրայ խօլական տատանումներով, ու յանկարծ կը քաշուի, կը կծկի, ոտքերուս տակ սողսկելով ու հոն անհետանալով:

Փողոցին անկիւնը յանկարծ քովէս կին մը հազիւ լսելի շուկով մը կ'ըսէ ինձ.

—Անուշիկս, ինձի նայէ...

Առանց իսկ գլուխս դարձնելու ճամբաս կը շարունակեմ, երբ նոյն ձայնը, այս անգամ ողորմուկ, յուսահատական շեշտով մը, կը կրկնէ.

—Ինձի նայէ կ'ըսեմ:

Գիշերուան այդ ժամուն, երբ ամենքն ալ, ամենէն անժառանգներն անգամ, ընդհանուր խնջոյքին փրանքներովն իսկ խաբուսիկ երջանկութիւն մը կը վայելեն, իրօք շատ անբաղդ ըլլալու է այդ խեղճ կինը որ, անձրեւին տակ, դեռ կը յամառի անցորդի մը «կառչելու»:

Կարեկցութենէ շարժած, օձիքս շուտ աղատելու համար, թերեւս իսկ իրեն առիթ տալու համար բաժին մը ունենալ երջանկութենէն զոր ես չեմ կրցած վայելել,—չեմ կրնար որոշել,— ձեռքս զըրպանս կը տանիմ եւ ճերմակ գրամ մը սահեցնելով իր ձեռքին մէջ, ճամբաս կը շարունակեմ: Կը տեսնեմ որ կինը ետեւէս կուգայ: Թերեւս մեր փողոցը կը բնակի:

Մեր տանը դրանը առջեւն եմ, զանգակը կը քաշեմ. դուռը կը բացուի, եւ զայն չգոցած, նոյն կինը ետեւէս ներս կը սպրդի: Մեր ձեղնայարկին անժամօթ բնակներէն մի՞ն է արդեօք:

Սենեակիս դրան առջեւ կանգ կ'առնէ ինքն ալ: Լուցկի մը կը վառեմ որ իր դէմքը կը լուսաւորէ: Դեռ բերանս չբացած, դէմքիս արտայայտութենէն կը կռահէ ըսելիքս, որովհետեւ, զարմացմամբ մը,

—Ա՛հ, մէկտեղ գալու համար չե՞ր:

Եւ, ծեծ ուտող շան մը նայուածքով ու խեղճուկ շեշտով մը,

—Ձգէ՛ քիչ մը տաքնամ, կը մտիմկոր:

Ներս կը մտնենք միասին: Աշտանակիս վրայ քիչ մը մոմ մնացած է, կը վառեմ զայն, եւ աթոռ մը կուտամ իրեն որ նստի:

Քանի՞ տարեկան կայ. աղուո՞ր է թէ տղեղ: Տարիքը մեծ ըլլալու չէ. երեսո՞ւն. կ'երեւայ, բայց ըլլալու չէ: Բաւական բարձրահասակ, նիհար, շագանակադոյն մազերով, ճերմակ մորթով, խաժ խոշոր աչքերով որք դէմքը կը լեցնեն:

Շմինէին մէջ ածուխ կայ բարեբաղդաբար, կը բռնկցնեմ ու քիչ ետքը զըւարթ բոց մը կը լափլիղէ սեւ կտորները:

Կինը աթոռը կը քաշէ շմինէին առջեւ, իր թրջած կոշիկները երկնցուցած, ամբողջ մարմինը մերթ ընդ մերթ սարսառ-

լով զգայած տաքին երանաւէս գողէն:

Թիկնաթառի մը մէջ թաղուած, կը մտածեմ: Մինակ ըլլալ կ'ուզէի և ազ կիներ կը խանդարէ իմ մենութիւնս: Սըրտնեղութիւն մը կը զգամ: Պահ, հիմա քիչ մը պիտի տաքնայ, կոշիկները պիտի չորցնէ և ելլէ երթայ:

Իր նայուածքն իմ նայուածքիս կը հանդիպի: Աչքն է միայն կենդանի իր ամբողջ գեմքին վրայ, խոշոր հիւանդ աչքեր որոց ձերմակը ախտաւոր բան մը ունի կարծես, պաղած գիծերու պէս, ու նայուածքը՝ անասունի ու մանկան նայուածքի միամիտ պարզութիւնն ունի, անգիտակից համակերպութիւն մը:

Այդ նայուածքը անհանդիստ կ'ընէ զիս: Գուշակե՛ց արդեօք արտնեղութիւնս:

—Բան մը կերպ՞ծ ես, կը հարցնեմ յանկարծ, այդ մտածումէն ազատելու համար:

—Ձե՛, կը պատասխանէ չոր կերպով:

Պահարանին մէջ քիչ մը սուտիլք կայ ու կէս չիչ գինի. շմինէին վրայ կը գնեմ և իրեն կը հրամայեմ:

Անյադօրէն կ'ուտէ, լեզուն շաշեցնելով գինին կուլ տալով անախտած ձայնով մը:

Երեւը քիչ մը գոյն եկած է հիմա տաքէն ու գինիէն: Գլխարկը կը հանէ ու շմինէին վրայ կը գնէ, թոյլ շարժումով մը մազերը շակերով:

—Ձեք խօսի՛ր կոր, կ'ըսէ ինծի:

—Դուք խօսեցէք, ես մօտիկ կ'ընեմ:

Անտարբեր ձայնով մը կը սկսի խօսիլ ապիկն անդիէն: Շատ մարդ էար այն իրիկունը դուրսը, բայց ամենքն ալ խենդ ու խելառ բաներ ընելու համար: «Էուրջ» մարդիկ չկան: Չորս հինգ օրէ ի վեր մարդ մը գտած չէ: Յայտը այդ իրիկուան վրայ դրած էր: Տանակը զինքը շատ նեղը դրած է:

—Մօտիկ չէ՞ք ընէ՛ր կոր, կ'ըսէ յանկարծ:

Ու աւելի զբօսական նիւթ մը ձեռք կ'առնէ: Անցեալ գիշեր Պիլիէ գացեր է. մինչեւ ետքը պարեր է: Շատ զուարճացեր է, բայց չտա: Լիւսին հեան էր, պզտիկ Լիւսին, կը ձանձնա՞ք, նոն որ

Ռիւ տը Սուպոնի անկիւնը կը կենայ. վաղ մը խաղացած ատենը գետինը ինկեր է. մէկ քանի ուսանողներ եկեր վերցուցեր են զինքը և ուսերնուն վրայ պարտցուցեր են. խնդալէն մարեղու բան էր:

Պահ մը լռութիւն կը տիրէ զարձեալ սենեկին մէջ: Փողոցէն կ'անցնի երթաատարգներու գինով խումբ մը, որ սենեկին ապակիները դղրդեցնելու աստիճան կը պոռչտայ Պաիւանի մէկ կողմը: Ազնիկը պատահանին կը մօտենայ, վարապուրը մէկգի կ'առնէ, պահ մը գուրսը կը գիտէ ու ապին կը դառնայ:

—Ես գիտեմ այդ երգը:

Ու անուշ պզտիկ ձայնով մը կ'երգէ.

Papa c'était un lapin
Qui s'app'lait J. B. Chopin
Et qu'avait son domicile
A Bell'ville;

L'soir avec sa p'tit'famille
I's'balladait en chantant
Des hauteurs de la Courtille
A Mênilmontant.

Երգը կ'աւարտէ և յուսահատութեամբ կուգայ սեղը կը նստի:

—Տխու՛ր էք, կը հարցնէ:

Ձեռքի խուսափողական շարժում մը կ'ընեմ:

—Իրողութիւնը սա է որ, կ'ըսէ ժըլտեղով, այնչափ բան ըսի և բերաննիդ չի բացիր:

Ո՞նք ազնիկ: Ի՞նչ ըսեմ տակայն իրեն: Ի՞նչ անգունդներ կը բա՛նեն զմեզ իրարմէ: Իր խեղճ կեանքը մաքիս առջիւ կը բերեմ, իր զիշերայած ոգիի թախծայից կեանքն որ, պոտառ մը հացի համար, ստիպուած է ժամկրով մայթելուն վրայ պարտելու, ձիւնին ու անձրեւին, անյարգներուն արհամարհանքին և կարգ մը խոտութեանց ենթակայ: Ո՞րքէ սկսելով, ի՞նչ թաւաղողը վայելչքով մը, հասած է այդ աստիճանին, —չէ՛, այդ յատակին, որքէ անդին ա՛լ աստիճան չկայ: Ու յետոյ զգացման ի՞նչ նոյնութիւն կայ մեր երկուքին միջեւ այդ ժամուն, ի՞նչ ունի իր վրայ որ կարենայ այդ տխու-

թեան վայրկենին յարմարիլ: Կրնա՞յ ըմբռնել թէ ժամանակին չէ եկած:

Կրակը մարելու մօտ է և մօմն ալ հասնելու: Խռովիչ լուսթիւն մը կը տիրէ սենեկին մէջ: Գուրսը ձայն ձուն չկայ:

Կինը ոտքի կ'ելլէ նորէն, պատուհանին մօտ կ'երթայ և պահ մը դուրսը կը դիտէ:

—Անձրեւ կուգայ կոր միշտ, կ'ըսէ: Ա՛խ, ի՞նչպէս պիտի երթամ:

—Հեռո՞ւն կը նստիք:

Այո՛, բաւական հեռու, քաղցրով իբր կէս ժամ ճամբայ: Ու ինծի կը նայի դարձեալ իր հայցական խոշոր աչքերովը, անասելի մորմոքումով մը լեցուն: Խեղճ աղջիկ. ի՞նչ կ'ըլլայ. մնաց որ մէկ երկու ժամէն կը լուսնայ:

—Հո՛ս անցուր գիշերը, կ'ըսեմ իրեն մէկէն ի մէկ: Ես թիկնաթոռին վրայ կ'երկըննամ:

Աղջիկը պահ մը կը մտածէ և հաստատ ձայնով մը.

—Ձէ՛, չէ՛, կ'ըսէ, չեմ ուզեր ձեզի անհանգիստ ընել. կամաց կամաց կ'ելեմ կ'երթամ:

Ա՛լ առջի անփոյթ անտարբերութիւնը չկայ գէմբին վրայ: Ձինքը շրջապատող սրտմութենէն բան մը անցած է իրեն, և կրակարանին առջեւ անցնելով ու ածխացած կտորները խառնուելով.

—Իրա՛ւ, հաւատա՛, տխուր բան է աս, բայց շատ տխուր, կ'ըսէ ցած ու խորունկ ձայնով մը:

Ու, աչքերուս մէջ նայելով ուղղակի և կարծես հոն կարգաւով այն կանացի նուրբ խելամուտութեամբ զոր բոլոր կիներն ալ ունին՝ էն բարձրէն փնջեւ էն ցածը, կը շարունակէ.

—Միտքս կուգայ մեր Ծնունդը, մեր դիւղին անկիւնը: Կէս գիշերին երբ եկեղեցիէն կը դառնայինք լապտերներով, ձիւներուն վրայէն ցատքելով ցաաքբտելով սեղանին մէջտեղը անկուած էր Ծնունդի ծառը, վառուած մոմերով և ոսկեգոյն ընկոյղներով: Ապուրը կը մխար ամաններուն մէջ, ու ամենքս սեղանին բոլորովը կը շարուէինք:

Աթուր կ'առնէ ու ճիւղ քովս կուգայ

կը նստի: Կը զգայ թէ ներքին ի՞նչ ձայնի մը կը պատասխանէ:

—Բոլոր տունէն էին, ու բարեկամներ ու ծանօթներ, ամենքս մէկ սիրտ, մէկ հոգի: Բազմը այսպէս ուղեր է որ բաժնուիմ անոնցմէ: Գէշ հով մը առեր հոս նետեր է դիտ: Հիմա միտքս կուգայ թէ ի՞նչ եղած են անոնք, ի՞նչ կ'ընէին հիմա:

Իր խօսքերը մօտիկ կ'ընեմ, բերնէն կախուած: Ու ինծի այնպէս կուգայ որ զմեզ իրարմէ բաժնող անդունդը հիմա կը լեցուի, խեղայեղիչ արագութեամբ մը, ու ա՛լ իրարմէ հեռու չենք:

Ճրագը յանկարծ կը մարի. բոցը, մեռնող օձի մը լեզուին պէս յամրուոր տատանումներով իր չորս բոլորքը լիւղլէ յետոյ, կը չչէ ու կը մարի:

Բայց՝ սենեակը մութ չերեւնար ինծի:

ԼԵՒՈՆ ԲԱՇՏԱԼԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

ՊԱՐՈՆԵԱՆԻ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ

«Ասպետ» սրտայոյլ տողերով կը նկարագրէ Պարոնեանի այրին հիւանդութեան անկողնոյն մէջ, երբ այցելել է անոր Կաղանդին առջի օրը, «Հայրենիք»-ի խմբագրութեան ղրկուած գումարներուն մէկ մասն յանձնելու: Այդ տխուր «Օրը օրին»ը որ հիւանդաբոյր բան մը կը պարունակէ իր մէջ, յիշողութեանս մէջ կը կենդանացունէ հակապատկեր մը, —տիկին Ստեփենիկ Պարոնեանը՝ իբր քսան տարի առաջ, դեռ նորասի աղջիկ մը, զրկիւթ մանուկ մը, ծաղկի պէս նորափթիթ ու թռչունի պէս սատոտուն:

1873 ին էր, կարծեմ: Օրթագիւղի այն ձորին եզրը կը բնակէինք, որ դիւղը երկու մասի կը բաժնէ, ոչ միայն թաղային բաժանումով՝ այլ և բարուց ու դիրքերու տեսակետով ալ: Գէթ այն թրւականին, ձորին մէկ կողմի բնակիչները միայն հարազատ Օրթագիւղի կը նկատուէին: միւս մասը, որ աւելի Գուրուչէ-

մէի բարձանց կը մօտենայ, այդ իրաւունքը չէր տար իր հիւրընկալած բնակիչներուն, թէպէտ ոչ նուազ բազմաթիւ էին անոնք և կային որք չատ պատուաւոր անոնքներ կը կրէին: Տեղական տեսակ մը սովորոյթ, տեսակ մը աւանդութիւն,—ինչպէս կ'ուզէք,—որ ժամանակին հետ ալլափոխուեցաւ, մոռցուեցաւ, և իր հետ կորանցունել տուաւ նաև «Օրթագեղցիութեան» հրապոյրը:

Չորին վրայ նայող բոլոր տունները պարտէզներ ունէին. մերինը կիսափուշ տախտակորմով մը բաժնուած էր քովի պարտէզէն, ուր երկու եղբայրներ ու երկու քոյրեր կը վազվառէին ամեն իրիկուն ու կիրակի օրերը, մանկական խաղերով զուարթութիւն պիտելով այդ մենաւոր ծառաստանին տակ: Քիչ քիչ,—սղայոց յատուկ գիւրահաղորդումով,—բարեկամացանք իրարու հետ, և իւրաքանչիւրս անձկութեամբ կը սպասէինք իրիկուան արձակուրդի ժամուն, երբ ի դարձին դպրոցէ՝ զիրար պիտի գտնէինք կեռասներին տակ կամ հաւնոցին մօտ, նոր խաղ մը, նոր զբօսանք մը հնարելու հետամուտ: Երկու քոյրերէն փոքրիկը՝ Սաթենիկ՝ զուարթ ցնծուն աղջիկ մըն էր, կապոյտ գեղեցիկ աչքերով, մութ խարտեազ գանգուր մագերով, որուն ներկայութիւնը միայն ուրախութիւն կը պատճառէր մեր մանկական խումբին: Իր մեծ քոյրը, երկու եղբայրները և ես՝ հակառակ մեր այնքան յօժարութեան՝ չլրցանք բնաւ իրեն չափ աշխոյժ, զբօսալից ըլլալ: Ինքն էր որ խաղերը կը ստեղծէր, քաղուելիք պտուղները ցոյց կուտար, երգերը կը սկսէր, ծաղկեփունջեր կը կապէր: Իր անունը Սաթէնի վերածած էինք, և երբեմն, խաղերու ոգեւորեալ վայրկեաններուն, աւելի կրճատելով Սաթ կը կոչէինք:

* * *

Օր մը, երկու վարձսրներ եկան բնակիլ իրենց տան վերնաշարկը. մէկը՝ ընտանիքով, միւսն առանց ընտանիքի: Երկուքն ալ պարկեշտ, բարի մարդիկներ, որոնց համակրեցանք հետզհետէ. մեր պատանեկան սրտատեսութեամբ՝ կը նշմարէինք

որ սովորաբար մեր տեսած մարդերէն տարբեր երեւոյթ մը կը կրէին. իրենց խօսակցութիւնը կը հետաքրքրէր զմեզ ու միշտ զուարճալի կողմ մը ունէր, համով հատով չեչու մը որ կը քաշէր զմեզ: Կամովին կը թողութիւնք մեր խաղերը և կը համախմբուէինք անոնց շուրջ. առաջինը անպէս, անմօրուս մարդ մըն էր որուն տեսքը միայն ծիծաղնիս կը շարժէր. «գերատան է» կըսէին. այս անունը մոգական բառի մը պէս կը հնչէր մեր ահանջին ու զարմանքով կը դիտէինք զինքը: Ատեն անցնելէն վերջ, երբ բեմին վրայ կը տեսնէի Դրեանցը, կը յիշէի մեր հին դրացին որ այնքան խնդացունել տրւած էր զմեզ:

Միւսը, «Էտիրնէցին», ինչպէս կը կոչէին զինքը թաղին մէջ, շատ լուրջ դէմք մը ունէր, լուրջ խօսուածք մը. և սակայն տեսակ մը իրարանցում առաջ բերած էր ընտանեկան շրջանակներուն մէջ. կիները կը փախային իրարու թէ «չարիվարի կը գրէ» ու կը զգուշանային իրմէ: Շատ կը կարգար ու քիչ կը գրէր: Սովորաբար Մուրիէնի կամ Պուլալի հատոր մը ունէր ձեռքը, պատուհանին քով ուր կ'առանձնանար իրիկունները: Պարոնեանն էր:

Երկու երեք տարիներ անցան այսպէս: Տակաւ առ տակաւ միտքս կը թուելով ու գաղափարներս զարգանալով, կը սկսէի ըմբռնել թէ յարգի բան մըն էր «Մեղու» ի խմբագրին զրացնութիւնը. իրմէ կ'առնէի իր լրագիրը զոր կը կարդայի անյապաբար. ու մտովի կը սքանչանայի այս պարզ, համեստ մարդուն վրայ որ այնքան սիրուն բաներ կը գրէր. չէի կըրնար ըմբռնել թէ ինչպէս, իր սենեկին անկիւնէն, այնքան բան կ'իմանար եւ կ'ուսումնասիրէր: Անգամ մը, —ո՛հ, չպիտի մոռնամ բնաւ զգացած ուրախութիւնս որուն նման անխառն հրճուանք չատ քիչ ունեցիր եւ անկից ի վեր,— խոստացաւ ինձ հրատարակել զպրոցականի մէկ ոտանաւորս զոր ցոյց տուած էի իրեն. այդ խոստման գիշերն անքուն անցուցի, երազներով ստորագրութիւնս՝ լրագրին մէջ տպուած հատիկ հատիկ. տառերը կը խոշորնային տաք երեւակայութեանս առջև.

յաջորդ օրերը տենդայոյզ անձկութեան մը ենթակայ էի. սիրտս կը բաբախէր խմբագիր-գրացի տեսնելով, բայց չէի համարձակեր խոստումն յիշեցունել իրեն. դպրոցին մէջ ընկերներէս կը ծածկէի՝ անակնկալ մը ընելու իղձով, վասն զի իրենցմէ երկուքն յաջողած էին մէկ մէկ փոքրիկ բանաստեղծութիւն հրատարակել տալ «Մասիս»ին մէջ:

Վերջապէս իրիկուն մը Պարոնեան գըր-պանէն հանեց նոյն օրուան «Մեղու»ն և ինձ երկնցուց՝ քմծիծաղով մը որուն մէջ բարութիւն կար և գուցէ նաեւ տեսակ մը արդահատանք, թէ այսքան պզտիկ բան մը կրնա՞ր այդքան մեծ երջանկութիւն պատճառել, ինք՝ որ վաղահաս ձանձրոյթ մը ունէր խմբագրութենէ: Դողողուն մատներով բացի թերթը, չէի գիտեր ո՛ր էջին մէջ փնտռել, բայց աչքերս բնազդաբար յառեցան սիւնակի մը մէջտեղը, փոքրիկ սիրուն տառերով տպուած ոտանաւորի մը վրայ որ ոսկետառ կ'երեւար ինձ...:

* * *

Դրացի ընկերներս ու ընկերուհիներս ալ մեծցած էին ինձ հետ. դադրեցուցած էինք այլ եւս մեր խաղերը. երկու եզբայրները շուկայ կ'երթային և երկու քոյրերն՝ իրենց մօր թեւին տակ՝ կը զբաղէին տնական հոգերով: Փոքրիկը, Սաթէն, գեղեցիկ աղջիկ մը դարձած էր ու դպրապէս դարգացած. ծանրախոհ երեւոյթ մը կար իր վրայ, ու կանուխէն խոյս տուած էր առջի տարիներուն զբարթութիւնը: Մեկամաղձոտ ստուեր մը եկեր խառնուեր էր իր ժպիտին ու երազուն բան մը իր նայուածքին: Չէինք կրնար, — ու չէինք ալ հետաքրքրուեր, — գիտնալու թէ արդեօք դէպի երիտասարդութիւն թեւակոխումն էր թէ ոչ նոր սկսող սիրոյ մը անձանաթ յուզումն որ այդ այլափոխումն առաջ կը բերէր անոր կեանքին մէջ. բայց շատ չտնայած, ուրախութեամբ իմացանք, — իբր բարի դրացիներ, — թէ «Պարոնեանը Սաթենիկին նշանուեր է»: Այդ ծաղկատի աղջկան անդրանիկ համակրանքն, անդրանիկ սէրն՝ իր արձագանգը կը գտնէր «Մեղու»ի խմբ-

բագրին սրտին մէջ, որ՝ հանրութեան համար հեգնող ու սկեպտիկ, իր ներքին կեանքին մէջ կը զգար երիտասարդական խանդավառում ու պաշտում. սէրը՝ Պարոնեանի գրչին տակ այնքան ծաղրուած, կուգար վերջապէս իր սրտին ալ տիրել:

Հարսնիքէն վերջը, Օրթագիրւոյ մեծ հրդեհը, որ մոխիր դարձուց մեր բնակած թաղն ալ, ամենքս մէկ մէկ կողմ ցրուեց: Պարոնեանն յաճախ կը տեսնէի, մանաւանդ վերջին տարիները, բայց անգամ մը միայն պատահեցայ իրեն՝ կնոջն ու զաւկին հետ միատեղ: Բարի ամուսին մըն էր, որ կը գուրգուրար իր կնոջն ու փոքրիկ Աշոտին վրայ: Տիկին Սաթենիկ, քիչ մը նիհարցած, մանկամարդ ու գորովալիւ մօր մը կերպարանքին տակ կը յիշեցունէր ինձ փոքրիկ Սաթէնը, տղայութեան ընկերուհիս:

Ու փոքրիկ Սաթէնը կը յիշեմ հիմակ ալ, աղօտ հեռապատկերի մը պէս, որ քսան տարի ետքը յանկարծ կ'երեւայ «Ասպետ»ի տխուր տողերուն ընդ մէջ: Եւ կը մտածեմ իւրովի, թէ իրաւ արդեօք, այն երբեմնի զուարթ աղջիկն, որ այնքան վճիռ ձայն մը ունէր ու կենդանի այտեր, նոյն այն հիւանդ ու դալկահար կինն է որ հազիւ ոյժ կ'ունենայ երկու հազի մէջտեղ, դժուարին հեքով մը, շնորհակալութիւն յայտնելու այն աղնիւ անձերուն որք իր ցաւերը մեղմելու ջանքեր կ'ընեն:

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Լուսանկարի կիրառութիւնը աստղաբաշխութեան մէջ. — Պ. Մուսսանի փուլը. — Նոր Գալի-Ֆօրնիան. — Դրամ բաշխող մեքենայ մը:

Ստուգիւ, Գիտութիւնը յոգնիւ չգիտեր իր դէպի յառաջ վազքին մէջ: Եւ շատ դիւրաւ կը հասկցուի այս: Հազիւ կը կարծուի որ իր ընթացքին մեծ մասը կատարած է եւ ալ կարելի չէ իր ունեցած միջոցներովը շատ ճանքայ կտրել և ահա, նորագիւտ միջոց մը, մեթոտ մը յան-

կարծ նորորինակ ոյժ մը կուտայ իր կթոտելու մօտ ծունդերուն, նոր թափ մը կ'աւելցնէ իր գանգաշելու մօտ քայլերուն:

Աստղաբանութեան մէջ, ուր կատարելագործեալ հեռագիրտակներ սպառելու մօտ կ'երեւէին արեգեղբայրն պարունակած, կամ գէթ, մեր տեսութեանը համար պարունակած երկնային մարմինները, լուսանկարի մեթոտը կուգայ տեսողութեան զօրութիւնը յանհունս բազմապատկել, ու իր տօմարին մէջ խել մը նոր ու պզտիկ մոլորակներու, վարսամներու ու միգակերպներու (nébuleuse) ստուար թիւ մը կուգայ արձանագրուիլ երկվայրկեանի մը մէջ շուտ շուտ, աւելի շուտ քան ծոյլ աշակերտներ. դպրոցական վերամուտին:

Այսուհետեւ հեռագիրտակը ուղղակի աչքին դրուելու տեղ լուսանկարի ոսպնածե հայրին տեղը պիտի դրուի, որ արհեստական աչքի մը պէս պիտի ծառայէ շատ աւելի զոհանցուցիչ կերպով քան թէ մեր բնական աչքը:

Բայց չէլէք ասոր համար Տօթթէօր էսմէրեանի դիմէք բնական աչքերնուդ տեղ արհեստական աչք մը դնել տալու համար: Մերձաւոր առարկայներու համար նորէն մեր ունեցած աչքէն ալէկը չկայ:

Այս լուսանկարի մեթոտը, հեռագիրտակի զննութեանցը հետ լծորդուած, կարող եղած է երկնային քարտէսի մը պատրաստութեան միջոցն ընծայել, երկինքը ճանչցունել երկրիս նման, թերեւս անկէ ալէկ: Պ. Ֆլամարիօն իրաւամբ կը պնդէ որ Արկսը շատ աւելի ծանօթ է մեզի քան Ափրիկէի կամ բեւեռային երկիրներու ինչ ինչ մասերը:

Եւ մէկանց, հսկայ ոստումով մը, երեք հարիւր միլիօնի ելած է երկնային մարմիններուն թիւը որ մինչեւ հիմայ տասը միլիօնէն աւելի չէր կարծուեր:

* * *

Տարրաբանութեան մէջ, եթէ ոչ բոլորովին նոր միջոց մը, գէթ գտնուածին մեծ ընդարձակումն է զոր Հանրի Մուսսան կ'ընծայէ ահա իր ելեքտրական նորահնար փուռովը:

Ծանօթ է շատերուն թէ ցարդ 1600

աստիճանէն բարձր ջերմութիւն մը չէ ունեցած տարրաբանը իր տրամագրութեան տակ. բայց տարրերը շատ մը հետաքրքրական յատկութիւններ, գաղտնիքներ ունին զորս կը մերժեն յայտնել 1600 աստիճանի տաքութեամբ որ թուի թէ շատ բարեխառն է իրենց համար: Զիրինք խօսեցնելու համար պակտած բանը աւելի բարձր ու աստիճան ջերմութիւն մը ձեռք բերելն է:

Պ. Մուսսանի փուռը կըցած է մինչեւ 3000 աստիճան ջերմութիւն արտադրել. իր գիւտը խիստ պարզ է. անաղակ աղիւսի (brique réfractaire) վրայ հաստաւել դրական ու ժխտական ածուխներու մէջ երեւան ելլող աղեղնաձեւ լոյսին տաքութիւնը:

Այս փուռին միջոցաւ երեւելի տարրաբանը 2500 աստիճանին կըցած է հալեցնել սթոնսիանն ու մանյէղիան ու 3000 աստիճանին՝ չմարած կիրը, որ փուռին շինութեանը մէջ գործածուած է, կը հալի կը հոսի, փուռին խողոցը կը խորունկնայ ու անոր կրային մասերը իրարու կը փակչին, այնպէս որ առ հարկի ամեն փորձ կը դադրի: Պ. Մուսսանի փուռը իր ամեն բան հալեցնելու անհուն զօրութեամբը վերջ ի վերջոյ ինքզինքը կը հալեցնէ, տեսակ մը անձնասպանութեան զոհ երթալով:

Անոնք որ թանկագին քարերը արհեստական կերպով պատրաստելու կ'աշխատէին ցարդ, մասնակի յաջողութիւն մը ունեցած ու կըցած են Պ. Մուսսանի փուռին մէջ 3000 աստիճանի տաքութեամբ յալինթ շինել, իր անոյշ կարմիր գոյնովը, ճիշդ ինչպէս համով խմորեղէն մը պիտի եփէին հոն:

* * *

Թանկագին քարերն այս կերպով ձեռք բերելէն վերջը, գիտութիւնը կրնա՞ր մէկդի ձգել ոսկին, այս մշտնջենական անուրջներու առարկան մոռնալ:

Ոսկի շինելու գաղափարը վաղուց ի վեր զբաղեցուցած է գիտունները ու հիմայ թէեւ հաստատուած է թէ անկարելի ի չգոյէ ոսկի շինել, բայց գոնէ նոր ու անսպառ ա-

ւազան մը գտնուած է ուսկից կարելի է ուզուած քանակութեամբ ձեռք բերել:

Այս նոր Քալիֆօրնեան՝ ծովն է, պարզապէս ծովն, այո՛, այն որ ամեն կողմ կը գտնուի եւ անհատնում է:

Արդարեւ մինչեւ ցարդ գիտէինք թէ շատ մը գետեր լուծեալ վիճակի մէջ ոսկի կը թաւալեն իրենց ջուրերուն հետ ու կը տանին ծովը:

Նորվեկիացի գիտնական մը Պ. Միւնսթէր խնամոտ փորձերէ յետոյ ճշդած է ծովի ջուրին մէջ գտնուող ոսկիի նաեւ արծաթի քանակութիւնը: Հարիւր լիտր ծովի ջուրի մէջ, իր հաշիւով, կը գտնուի 5-6 միլիկրամ ոսկի եւ 19-20 միլիկրամ արծաթ, այնպէս որ մերձաւոր կերպով սենեակ մը ծովի ջուրի մէջ մէկ օսման-եան ոսկի եւ երկու մէծիտիէի չափ այս ըղձալի մետաղներէն կը գտնուին:

Խնդիրը զայն դուրս հանելուն մէջն է, սակայն չէ կրցած դործնական կերպով լուծել Պ. Միւնսթէր. ըլլուելիք ծախք՝ ձեռք բերուելիք ոսկիէն շատ աւելի մեծ պիտի ըլլայ: Փափաքելի է որ այս նոր փոլերանոցը, զոր Գիտութիւնը կը բանայ դրամ չունեցող մարդոց ակնկալութեանը առջեւ, դեռ չշահագործուի, վասն զի եթէ ոսկին հանելու միջոցը գտնուի, քիչ աստիճանով ծովերը պիտի ցամքին մարդկային անյագութենէն:

* * *

Եթէ չէք հաւատարար ասանկ դիւրաւ հարստանալու միջոցներուն, բաւականացէք անօթութենէ՛ չմեռնելու չափ ապրուստով մը զոր դարձեալ Գիտութիւնը կուտայ ձեզի:

Կը ճանչնաք հարկաւ այն ինքնաշարժ կշռորդը, ուրկէ հատ մըն ալ անցեալ տարի զրուած էր Պօն Մարշէի վաճառատան մէջ, ուրա՛յ տղի ծի գեղեցիկ զլուխ մը իր լայնարաց բանին մէջ կ'առնէր տուած քառասուն փարանոցնիդ՝ ու փոխարէն քանի օրու համ քիչ կշռելնիդ կիմացնէր ձեզի: Դուք էիք որ կը վարձատրէիք զինքը իր անխօսուկ կերպով ձեզի մօտուցած ծառայութեանը համար: Իմայ ան է որ պիտի վճարէ ձեր աշխա-

տութիւնը, եթէ դուք ալ աշխատելու յօժարիք իրեն պէս:

Անգլիոյ մէջ հնարուած է մեքենայ մը որ ելեքտրական զօրութիւն հաւաքելու կը ծառայէ:

Նորահնար մեքենային քով մանիճ մը կայ, բռնելու կոթ մը, զոր ուղողը կըլնայ դարձնել, հարիւր հեղ դարձնողին ավին մէջ, իր գաղտնի գանձանակէն, քսան փարայ կը ձգէ, խղճամիտ վարպետի մը պէս որ շաբթու գլուխ իր գործաւորին աշխատութեան վարձքը կը հատուցանէ:

Այս մանիճը պղինձէ թելով հաղորդակցութեան մէջ է ելեկտրամագնիսի մը հետ որով՝ փոխանակ ածուխի սպառմամբ գոյանալու ձեռքի աշխատութեամբ ելեկտրականութիւնը յառաջ կ'ուղայ ու կ'ամբարուի:

Անգործ բանւորներու պէտքին թերեւս դահացումը բերել կը խոստանայ ձեռքի մը պէս ձեզի կարկառուող այս կոթը ուրկէ կասկածելու բան մը չունիք, զի ձեզմէ բան մը չյափշտակելէ զատ ստակ վրայ տալու կը յօժարի:

Սակայն անոնք որ, ամէն բանի պակաս կողմը գտնելու հետամուտ են, դիտել կուտան որ մանիճը հարիւր հեղ դարձնելը այնպիսի անօթութիւն մը կը պատճառէ որ քսան փարայի հացը չկրնար կշտացնել:

Չարամիտ մը կը կարծէ որ այս դիւտին պատիւը պէտք է վերագրել հնարագէտ Ակնցի հացագործի մը որ իր խանութը բանեցնելու համար, անօթիներուն փորը աւելի եւս պիտի անօթեցնէ այս մանիճը դարձնել տալով եւ տուած չնչին ստակը տեսակ մը սլարգելի տեղ պիտի ծառայէ հացին սպառումը աւելցնելու համար:

Արդարեւ, Հիռն բնագէտը, ապացուցած է որ գնդերային յոգնութեան մէջ մարդս չորս անգամ աւելի թթուածին եւ ջերմութիւն կ'սպառէ բազատամամբ անգործութեանը ատեն սպառածին, կամ տարբեր բաւերով՝ չորս անգամ աւելի մեռնողի կը կարօտի, ու կ'անօթենայ:

Այս դիտողութեան դէմ կրնանք պա-

տասխանել թէ այս դարձուելիք մանիճի
գիւտը արգէն անօթիներու սահմանուած
է, և լաւագոյն է քիչ մ'աւելի անօթենալով
պատառ մը հաց գնելու ստակ գտնելքան
թէ անօթի փորանց պառկիլ:

ԳԱՌՆԻԿ ՅՆՏՔԼԵԱՆ

ՔՈՒ ՊԱՏԿԵՐԴ

Ըզրեզ, սիրելիս, երգելու համար,
ես պիտի ընտրեմ բառերուն մէջէն
Անոնք որ ողորկ են ինչպէս մարմար,

եւ անոնք որ քաղցր ու ճոճ կը հնչեն,
Որպէս զի անունդ ապրի յաւիտեան
Կախուած՝ զեղօնիս անթառամ փունջէն.

Բառեր գունաւոր եւ բառեր բուքեան,
Փետուրի պէս գիրգ, սիւրի պէս փափուկ,
ձերմակ եւ մարուր ինչպէս քամէլիան.

Բառեր որ ցոլբեր ունին խոստափուկ,
Բառեր որ լոյսի րթնումներ ունին,
Եւ բառեր որ նուրբ են ինչպէս յափուկ:

Յետոյ, պիտի թռչնի առնեմ անհունին,
Սոխակին դայլայլն ու զեփիւռին սոյլ,
Եւ խնծիղն ամբողջ մանուկ զարունին.

Թիթեռնիկներէն իրենց վազըր թոյլ,
Այգէն՝ իր ժպիտն եւ լուսինկայէն՝
Իր մազերն արծաթ թափած հոյլ ի հոյլ.

Փայփայող բոյրեր որք կը հըմայեն,
Յորբեր դիւթական, լոյսեր օդածեմ
Եւ ձայներ աղու որոնք կը մայեն:

Այս ամէնքն իրար ես պիտի խառնեմ
Ու պիտի կազմեմ խըմորն հրաշալի
Կերտելու համար պատկերը վըսեմ:

Յետոյ, մտրիս մէջ, խօլ իլմերով լի,
Պիտի փնտրուեմ խորհուրդներն անգայտ
Որոնց մէջ սիրոյ շող մը կը փայլի.

Եւ զգացումներն որոնք ծառագայթ
Մ'ունին իրենց մէջ, երազներն աղուոր
Որք կը թռչին շեշտ ծախրանքով մ'անգայթ.

Եւ սիտի բանամ զոհար տուփը որ
Կը պարփակէ նուրբ ոճերն ու ձեւեր,
Բացատրուեթիւններն յանդուգն անսովոր.

Եւ պիտի զըրեմ. Բայը՝ խաթ թեւեր
Պիտ'առնէ տաղիս մէջ եւ Յօդն՝ ոսկի
ձարմանդի մը պէս պիտի ցատրէ վեր.

Պիտի ցոլցւայ ինչպէս ապակի
Դոյականն, ու պերճ հրթիռի նըման
Պիտի Ածականն յորդաթոյր ժայթքի.

Պիտի զըրեմ, եւ խանդով մ'աննահման
Պիտի երգեմ դէմքդ ու մարմինդ անգին,
Օծելով զքիչս արցունքովս յուզման:

Յետոյ, կերտողի հեշտանք մ'ահագին
Կուրծքս ուռեցնելով, ես պիտի դիտեմ
Իմ գործս, անկորուստ ծաղիկ իմ կեանքին:

Եւ թարմ ամոլներն հոգիով եղեմ
Որք ինձմէ յետոյ զայն պիտի տեսնեն,
Պիտի քեզ սիրեն, աղջիկ լուսաղէմ,

Ու զիս նախանձով պիտի երանեն:

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ԾԱՆՕԹ ԴԵՄՔԵՐ

ԿԱՐԱՊԵՏ ԴԱՐԱԳԱՆԵ

Շատերը կը ճանչնան զինքը իբրեւ
փորձ ելմտագէտ մը որ հսկայ ծրագիրներ
ունի մտքին մէջ. հնարագիտական մե-
ծամեծ հաշիւներ, խորհրդաւոր մտերմու-
թիւն մը թուանշաններու հետ որոնք իր
ականջն ի վար մոգական բառեր կը փըս-
փսան միշտ:

Վեցհազարեակի ընթերցողն է կարծես
որ անհաւատալի գանձեր գտնելու միջոցը
կ'ընծայէ քեզի, վայրկեանի մը մէջ սպի-
տակ էջի մը վրայ քանի մը ձեւեր գծելով
միայն:

Ու երազային վայելքներու բաշխողը կը
թուի աչքիդ այդ աղբբէկ մագերով անձը
որ, քիչ մը թաղուած իր խորհուրդներուն
մէջ, հանդարտաքայլ կ'անցնի քովէդ մար-
դու մը պէս որուն կ'ապաստուի ամեն տեղ
և որ ինքը՝ տեղէ մը բան մը չունի սպա-
սելիք:

* * *

Ու քիչեր կը ճանչնան բանաստեղծը,
տրտմութեամբ ու սակաւիկ մը պատրան-
քով լեցուն հոգին որ պահուրտած կ'ապրի
այդ հաշուադէտին մէջ:

Իր յղացած դրամական ահագին ամ-
բարտակներուն մօտ, ոսկիի, արծաթի
հոյակապ զանգուածներուն ճիշդ քովիկը,
ի՞նչպէս կրցած է փթթիլ բանաստեղծու-
թեան դողդոջուն ծաղիկը: Ի՞նչպէս այդ

մետաղեայ կառուցումներուն դրացիութիւնը պաղ մը չէ ձգած անոր վրայ և գրգռանոյշ ու թաղծագին մեխակ մը ծլած է հոն ուր կը վախցուէր թէ չարախնդաց դժնիկ մը միայն պիտի բուսնէր։

Ի՞նչպէս։

* * *

Կարապետ Գարագաշ ալ կը պատկանի Աղբիականի կղզեակէն հասնող սերունդին։ Իտալական կապոյտ երկնքին տակ մեծցած է ու անոր ջերմ կլիմային մէջ սնած։

Գրականութեան մէջ՝ այն բարձր ճաշակի տէր արուեստագէտներէն է որ իրենց ամեն երկին համար, անուրջի մէջ միայն ընդշմարտող ձեւի, գոյնի, գաղափարի կատարելութեանը կը բաղձան, Յիսուսի քով խրկուած նկարչին պէս՝ որ աստուածային պատկերի մը անթերի ձգտութիւնը ձեռք բերելու կ'աշխատէր։

Ողմտութիւնը, իր անձին դէմ, անիրաւութեան կը հասնի անշուշտ ու երբ մենք կ'ըմայլինք — դիպուածով տեսած ըլլանուս համար — իր թարգմանութեանց նկարագեղ ու ճշգրտագին ոճին վրայ, ինքը գաղտնի կը պահէ զանոնք դեռ հասարակութենէն։

Ու կը մտածեմ որ այս գրագէտը, այնքան դժուարահաճ իրեն համար որքան ներողամիտ ուրիշներուն նկատմամբ, ինչե՛ր չէ բղբտած, պատռած, ոչնչացուցած, դժգոհութեան վայրկեանի մը մէջ։ Ստուգիւ, մեր հիմակուան քիչով գոհացող գրողներուն ստուար թիւին մէջ Կարապետ Գարագաշ եղական դէմք մը կը ներկայացնէ մեզի։

* * *

Այս գրաբարագէտը չխորշիր նորերէն ու չանգոսնէր զանոնք. իր ձայնը քաջալերող է ամեն անոնց որոնք կը վաստակին ապերախտ վաստակը գրականութեան։

Ինքը՝ քերթողին հետ որուն երգերը բերած է մեզի այն բաներուն կը թուի երազել որ «միշտ կը մնան»։ Իր ընտրած ձեւն ալ գրականութեան մէջ գրաբար տանաւորի ձեւը, արդեօք տեսականի գաղափարով է նորէն։ Ազնուագոյն թերեւս,

բայց շատերու անմատչելի մետաղին վրայ է միշտ իր նրբակերտ քանդակները. կը կարծենք սակայն թէ երկաթն ալ որ մեր աշխարհիկ լեզուն է, իբրեւ ամենէն պարզ շինուածանիւթը, կարող է պիտանիի ու դեղեցկի կրկին պահանջումներուն գոհացում տալ ու կը հաւատանք որ արուեստաւորն հոն ալ իր ճաշակին նրբութիւնը, իր ճարտար ձեռքերուն վարժութիւնը ցուցնելու կարող է։

* * *

Այսպէս ոսկիի երազներու մարդը՝ վայելչապէս խառնուած է ոսկիէ երազներու մարդուն. թուանշաններուն բանաստեղծութիւնը տեսած ու հրապուրուած է ինքը և միշտ սիրահար մը մտայած է անհունին ու անսահմանին։ Բազդին ամեն մէկ ձախողուածներուն երգով մը պատասխանած է ու հիմայ, յիսունին մօտերը հասած, ամփոփուելին պէս զոր ամեն չօչափում կը կծկէ, ինքն ալ քաշուած ու ամփոփուած մէկն է։

Կ'սպասե՞ք արդեօք որ նորերն ալ կեանքի անդու պայքարին մէջ պարտասուն, հեփզհետէ ու մէկիկ մէկիկ ձգելով իրենց երիտասարդի վերացումները, կորսնցնելով սրտի պատրանքները ու պարտաւորելով խոտովանիլ վաղանցուկ հանգամանքը ամեն աշխարհային վայելքներուն, իր եզրակացութեանը գան, իր բանաձեւին որ հաւատքի մը վերջաւորութիւնն է և ուրիշ հաւատքի մը սկիզբը։

Աստէն համայն եղբեւանիք մեռանին։

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

Միւսի յաջորդ թիւը պիտի պարունակէ Հիւնքեարպէյէնտեան Տ. Յովհաննէս Ա. քահանայի պատկերն, հանդերձ իր կենսագրութեամբ և իր մէջ լեզուաբանական յօդուածով մը։

ՄԵՐ ՀՈՐԻՋՈՆԻՆ ՎՐԱՅ

ԻնքնԱՏԻՊ դեմք մը, Հ. Ստեփաննոս Եղեր-
ճեանը, նախկին Վենետիկեան մը, Թաղեցին Օր-
ձագիւղի մէջ, անշուք ու անշուկ Թաղումով:

Հանգուցեալ վարդապետը այն համեստ ու
յամառ գիտնականներէն մէկն էր որ աշխար-
հային կապերէ զերծ են շատոնց, ու մահը՝ ի-
րենց համար անծանօթի մէջ Թեւակոխում մը չէ:

Հ. Ստեփաննոս Եղերճեան լեզուազէտ մըն
էր:

—Անհին, հեռուն, խիստ հեռուն, Անգլիոյ
մայրաքաղաքին մէջ մեռաւ ուրիշ լեզուազէտ
մը, որուն աշխատութեանց սիրելագոյն առար-
կայներէն մէկն ալ մեր լեզուն էր: Պ. Շուրմիշ
մեռաւ դեկտ. 9/21ին, 16նորայի մէջ: Իր յիշա-
տակը միշտ յարգելի պիտի մնայ մեզի:

—Պ. ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ որ զրական ամեն սե-
ռերու հետամուտ է, Թատրերգութիւն մը գրած
է չորս արարուածով. տեղական բարբերու
պատկեր մըն է այս ուր բանբասանքը մատնա-
նիշ կ'ըլլայ զլիսաւորապէս: Նոր գրողներու հա-
մար Պ. Զօպանեան Թատրերգական ճամբան կը
բանայ:

Հայ դերասաններուն կը մնայ բեմի վրայ հա-
նել երիտասարդ զրագէտին նոր գործը:

—ԵՐԲՐԻՐ Ընդհանրապէս մերինները կը կշտամ-
բենք գիտութեանց մէջ իրենց յետամաց վիճա-
կին համար, չենք կրնար մեր ծափերը զլանալ
իրենց ամեն անգամ որ ճշմարիտ արժանիքի մը
սպասցոյցը ընծայեն:

Պ. Պ. Թաշճեան եւ ձէլալեան, բժշկական քաղա-
քային դպրոցի մրցման քննութիւններուն մէջ յաղ-
կող ելած են. առաջինը՝ որ մեր Ազգ. Հիւան-
դանոցի ներքին բժիշկն է արդէն, վերոյիշեալ
վարժարանին ներքին ակտարանութեան ուսուց-
չի օգնական անուանուած է. երկրորդը դեղա-
գործութեան:

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները:

—ԲԵՐԿՐԱՆԻԹ Լուր մը. Ժանօթ հայ վաճա-
ռականներ ձեռնարկած են Տ. Յովհաննէս Հիւն-
րեարպէյէնտեանի Ստուգարանական Բառարանը
ի լոյս ընծայելու նիւթական միջոցները պատ-
րաստել:

Պէտք է խոստովանիլ որ մեր ազգակիցները
զրական գործերու հրատարակութեան մասին
նշանակելի բան մը քրած չէին վերջին քսան
տարիներուն մէջ: Գազազ Ամիրայի, Տատեան-
ներու, Տիւգեաններու զրական առատածեռ-
նութիւններու դարը փակուած էր եւ անշուշտ
որ եւ է բարոյական նշանակութենէ զուրկ էին ա-
նոնք՝ որ չնչին դրամական օգնութեան մը փո-
խարէն՝ իրենց եւ իրենց հետ հօբերնուն, պա-
պերնուն, երբեմն ամբողջ գերդաստաններնուն ցե-
ղազրութեամբը ու ծագումովը զրքի մը ճակատը
գարդարել ու անմահութիւն ծախու առնել կը

կը փորձէին. այս շահախնդիր մեկենասները ա-
ւելի աղէկ կ'ընէին, մեր կարծիքով, մոռացու-
թեան մէջ Թաղուիլ բան Թէ ասանկ ծաղրելի
յիշատակ մը՝ իրենց ձեռքովը յաւերժացնել:

Ստուգարանական Բառարանը փորձառական
դրութեան կիրառումն է լեզուաբանութեան մէջ:
Հեղինակը իր հետազոտութիւնները կ'ամփոփէ
հոն ու լիարուռ օրինակներով կը հաստատէ
իր տեսութիւնը:

Անշուշտ չենք կրնար ո՛չ իր բոլոր տուած
կանոնները եւ ո՛չ իր բոլոր եզրա ացութիւնները
ամբողջութեամբ ընդունիլ. քայց անուրանալի է
որ, մեծ մասամբ, ուղիղ են իր դրած հիմունքը,
եւ դաւանած եղանակը՝ շատ մը ճշմարտութիւն-
ներ կը պարունակէ:

Լեզուաբաններուն կ'իյնայ վերջին դատա-
տանը ընել. մենք ուրիշ բան չենք կրնար ընել,
քայց յայտարարել որ ասկէ աւելի արժանաւոր
գործ մը չէինք կրնար գտնել յանձնարարելու
համար ամեն անոց որ մեր մատենագրութեան
նիւթապէս օժանդակելու փափագ ունին:

—ՏԻԿԻՆ ՄԱՏԱԿԵԱՆ, քաջանօթ մանկավար-
ժուհին, մանուկները Թողած է ըիջ մըն ալ ա-
նոնց ուսուցչուհիներուն հետ զբաղելու համար:
Բերայի Արհեստանոցին մէջ իր դասերը պիտի
սկսին վաղը: Կը յուսանք որ մեր վարժուհիները
կ'օգտուին այս առիթէն:

—ԵՒ ՈՒՐԱԹ հատրուածով վերջացնելու համար
տրտմութեամբ սկսուած այս տեսութիւնը, կը
նշանակենք հայերէն լեզուա Թատրական ներ-
կայացումներու վերսկսումը գոր Պ. Ֆասուլեա-
ճեանի կը պարտինք եւ ուր Տիկին Սիրանոյշին
ալ հանդիպելու բաղդն ունեցանք:

Լրագիրները երկարօրէն գրեցին Երեւակա-
յական Հիւանդին ու Գամեղազարդ Տիկնոջ եր-
րորդ արարուածին վրայ իրենց դատաստանը:

Հոս, բան մը չպիտի աւելցնենք մեր կող-
մէն. ըսենք միայն որ հասարակութիւնը, որ
-գ՝շ տղայ մը- չէ, դրուատեց, ծափեց ու պա-
կեց Ֆասուլեաճեանը:

Քիչ անգամ տեսնուած էր Գատը գիւղի
Թատրոնը այնքան լի որբան էր ներկայացման
գիշերը. տեղին անձկութենէն շատեր պիտի դառ-
նային ետ եթէ Տիւմայի զուլի գործոցը՝ շիկնե-
ցնելով ոմանց կարի զգայուն երեսը ու վիրաւո-
րելով անոնց պարկեշտասուն հոգին, Թատրոն
գալէ արգիլած չըլլար գիրենք:

Եւ այս ամէկոտները անոնք են որոնք ա-
ռաջին կը հանդիսանան միշտ վազելու ԳՕԾ ՏԸ
ԳՕԻՆԸՎԻԼԻ, ՄԱՍԳՕԹԻ, ԼԷ 28 ԺՈՒԳ ՏԸ ԲԷԼԵՎԻ
պէս խեղկատակութեանց:

Ո՞ր տեղուանք կ'երթաս պահուածիլ, ո՞վ
Պարկեշտութիւն:

ՄՈՂՈՐԱԿ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Տարեգլխոյ և Ծննդեան առթիւ սովորական շնորհաւորութիւնները կատարուեցան Պատրիարքարանի մէջ ուր Ս. Պատրիարքն ընդունեց ազգայնոց և օտարաց այցելութիւնները :

—Այվազովսքի մեծ համակրութիւն կը վայելէ Նիւ-Եօքքի մէջ: Իր պատկերներն ի ցոյց դրուած են: Յուն վարի մէջ մտադիր է կնոջն հետ Պոսթըն երթալ, անկից Ֆիլատէլֆիա, Ուաշինկթըն և ապա Շիքաօ: Ռուսոյի հիւպատոսն հացկերոյթ տուեր է ի պատիւ արուեստագէտին:

—Պատուելիներուն վերջինը անհետացաւ Թէոդորոս Զօրեանի մահուամբ, որ իր իննսուներկու վատակալից տարիները վերջացուց Պէրպէրեան վարժարանին մէջ:

—Հանգուցեալ Ազաբաբա Լալայեանի կտակակատարները Շամախու թեմական դպրոցին պիտի թողուն եղբւր հանգուցեալին կտակած 7000 ռուպլին:

—Պիլէճիկի թեմին առաջնորդ Տ. Մովսէս Ծ. վարդապետ կէօմրիւկճեան երեքշաբթի օրն իր պաշտօնավայրն ուղեւորեցաւ:

—«Մշակ»ի խմբագիր հանգուցեալ Գրիգոր Արծրունին մէկ շաբաթ միայն տառապած է թոքատապէ: Մինչեւ մահուան նախընթաց օրը, ուրբաթ, բնաւ երկիւղալի չէր իր վիճակը: Սակայն շաբաթ օրն յանկարծ բորբոքումը աջէն ձախ թոքին կ'անցնի և վիճակն անյուսալի կը դառնայ: Կէս օրին հոգին կ'աւանդէ բազմավաստակ գրագէտը: Թաղումը կատարուեր է դեկտեմբեր 26ին և մարմինն ամփոփուեր է Խօջիվանքի գերեզմանատունն ուր կանխաւ պատրաստել տուած էր իր գերեզմանը: Հանգուցեալն իր կնոջ թողած ըլլալով «Մշակ»ի սեփականականութիւնը, սոյն թերթ պիտի շարունակէ հրատարակուիլ:

—Տ. Աղարեան Պատրիարքը յառաջիկայ երկուշաբթի կը մեկնի Պոլսէն ի Հռոմ, ներկայ գտնուելու Լեւոն ԺԳ. Պապին եւ պիսկոպոսութեան յիսնամեայ յօբելեանին:

Ն Ե Ր Ք Ի Ն

Պաղտատի սուրհանդակը այսուհետեւ Անատոլուի երկաթուղիով պիտի ղրկուի մինչեւ Էնկիւլի, ուրկէ սուրհանդակ մը Սեբաստիայէն Տիգրանակերտ տանող մեծ ճամբով պիտի երթայ Կեսարիա և Անատոլուի զանազան կողմերը: Այս կերպով Կ. Պոլսէն Սեբաստիա թղթատարը եօթը օրէն պիտի հասնի, մինչ Սամսոնի ճամբով ինը օրէն կ'երթար:

—Պոնկովսքի վաչա իր հետեւորդ պաշտօնեայներով Տրապիզոն դնաց առողջապահական գործերը քննելու:

—Թէհրանի օսմ. նոր դեսպան Ղալիպ պէյ իր պաշտօնատեղին ուղեւորեցաւ:

—Տիգրիս գետն յորդեր է և ջուրերը բարձրացեր են չորս ու կէս լաւալի չափ, ու կը շարունակեն բարձրանալ:

—Եգիպտոսի նախարարապետ Մուսթաֆա Ֆէհմի փաշաի տեղ, որ հիւանդ է, նախարարապետ և ներքին գործոց նախարար անուանեցաւ Բիազ բաշա:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Յունուար 10ին (Ն. Տ.) Բանամայի դասը սկսաւ Բարիդի Վերաքննիչ Ատենին առջեւ որուն կը նախագահէր Պ. Բեռեվիէ: Ընդհանուր դատախազի աթոռը կը բաղմէր Պ. Ռօ. ամբաստանեալներուն պաշտպաններն էին Ֆրանսայի ամենէն պերճախօս ու հա բաւաւոր փաստաբանները Տիւ. Պիւի, Վալտէք Ռուսօ, Պարպու, Մարթինի: Ամենէն առաջ հարցաքննուեցաւ Պ. Շարլ տը Լէսէփս որ յայտարարեց թէ Բանամաի պարգեւաւոր վիճակահանութեան ծրագիրը երեսփոխանաց Ժողովին ներկայացուած ատեն, Պ. Պայօ, որ հանրօգուտ շինութեանց նախարար էր, 375 հազար Փրանք առաւ:

Իրմէ վերջը կարգաւ հարցաքննուեցան Ֆօնթան Բօթթիւ և Էյֆէյ: Այս վերջինը իր շինելիք գործերուն հաշիւէն երեսուն և երեք միլիոն Փրանք չահած էր:

Ընդհ. դատախազը բոլորին դատապարտուիլը պահանջեց որոնց մէջն է նաև Պ. Ֆէրտինան տը Լէսէփս:

Շաբթուան Լուրերուն աւելի տեղ պիտի տրուի և աւելի խնամ պիտի տարուի յաջորդ թիւերով:

Մ Ա Ս Ի Ս

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

Այսօրուրն է ՄԱՍԻՍ կը հրատարակուի ամեն շաբաթ օր, փոխանակ երեք շաբաթն անգամ մը հրատարակուելու:

ՄԱՍԻՍ պիտի պարունակէ

1. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ
 2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ, Գրական, Բանասիրական, Ուսումնական, Գեղարուեստական:
 3. Կենսաբանականներ, հայ զբաղէտներու, գիտնականներու, արուեստագէտներու, իրենց Կենսաբանական հանդերձ որոնք պիտի պատրաստուին յատկապէս եւրոպայի մէջ:
 4. ԳԱՆՈՒԹԱՆ ԿԵՆՏՔԻ զլուի մը:
 5. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ մաս մը ուր պիտի գտնուին ՆՈՐԱՎԷՊՆԵՐ, քերականներ, յիշատակներ, քրօնականներ, բնածին ամեն գրութիւններ:
 6. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՐ, որ ուսմանց, արուեստից մէջ եղող ամեն նոր գիւտերու ու յառաջդիմութեանց վրայ պիտի խօսի:
 7. ՕՏԱՐ ԿԵՆՏՔԱՆՆԵՐՈՒ ՈՒ ԿՐԱԳԷՏՆԵՐՈՒ վրայ տեղեկութիւններ:
 8. ԴԱՏԱԿԱՆ ԲՐՈՏԻԿՆԵՐ ուր ամեն հոգեկաւոր եւ հետաքրքրաշարժ եղեռնական եւ այլ դատաւարութիւնները պիտի ամփոփուին:
 9. Ազգային, քաղաքական ու արուեստագիտական ԼՈՒՐՆԵՐՈՒ մէջէն ընտրութեամբ հաւաքածո մը, որով ամեն կարեւոր անցքի վրայ տեղեկութիւն պիտի տրուի, ինչպէս մինչեւ ցարդ կ'ընէինք Մեր Հորիզոնին վրայ խորագրին տակ, բայց այսուհետեւ աւելցնելով զատ հատուած մը արտաքին ու ներքին լուրերու:
- Ինչպէս անցեալ շրջանի մէջ նոյնպէս յառաջիկայ տարի ՄԱՍԻՍին պիտի աշխատակցին մայրաքաղաքի բոլոր ծանօթ ու երիտասարդ զբաղէտները:
- Այսպէս ՄԱՍԻՍ իր գրական հանդէսի հանգամանքը պահելով հանդերձ՝ լրագրի մը օգուտները պիտի ընծայէ գաւառի ընթերցողներուն, հաղորդելով շաբաթական լուրերու կարեւորները:
- Եւ այս ամենը Քէ Պօլսի եւ Քէ գաւառացի համար անխտիր
- ՏԱՐԵԱՆ ՔԱՂԱՍՈՒՆ ԶՐՈՒՇ ԲԱԺԱՆՈՐԱԿՆԻ ՓՈԽԱՐԷՆ
- որ պէտք է վճարուի միշտ կանխիկ զրամով կամ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԻ հատմէկ ղրուշնոց՝ նամակի

ղրոշմանդով, Բօսնայի ծախքը մեր վրայ ըլլալով:

Անցեալ շրջանի մէջ ՄԱՍԻՍի 16 թիւի եւ մէկ յաւելումի գինն էր գաւառացի համար 25 դրուշ եւ հիմայ 52 թիւի փոխարէն՝ որ պէտք էր համեմատական հաշիւով 75 դրուշ ըլլալ, որոշուած է միայն:

ՔԱՌԱՍՈՒՆ ԶՐՈՒՇ

այսինքն անհաւատալի ըլլալու հափաժան գին մը: ՄԱՍԻՍի մէկ թիւը ձեռքէ պիտի ծախուի ըստ առաջնոյն մէկ ղրուշի:

Խմբագրութեան, բաժանորդագրութեան, հրատարակութեան եւ վերջին երեսի մէջ ծանուցումի համար ամեն նամակ ու դրամ պէտք է ուղղուին առ Տնօրէն - Խմբագրապետին ՄԱՍԻՍի, ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ, Փաստաբան, Ղալաթիա, Իզմիրի Օղլու Խան. Թիւ 3-4:



Ամեն անոնք, որք կ'ուզեն ծախայի և Զրուշ Զախարիա Թէյ Խմբ, պէտք է դիմեն Կ. Պոլիս, Պահչէ-Գարու, Ճէլալ Պէյ Խանի կից Թիւ 10, ԵԱՎՐՈՒՆԱՆ և ԽԱՌ-ԳՈՒԼԵԱՆ վաճառատուներ, որու զանազան տեսակ Թէյեր՝ Թէ՛ տեսակի ազնուութեան, Թէ՛ ճաշակի և հոտի անուշութեան և Թէ՛ գիններու աժանութեան կողմանէ անհամեմատելի են:

Յիշեալ վաճառատան Թէյերը Թուրքիոյ բոլոր Թէյավաճառաց քով կը գտնուին ի վերեւ ղրուած մարքայով, որու կեղծերը ելած ըլլալով պէտք է զգուշանալ:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻՆԹԻՒՆԿԱՆ

Ի Տպարանի ԱՐԵԻՆԷՔ Եւ ՄԱՍԻՍ լրագրաց